Մենք պատրաստ ենք օգնել

LACDMH
Դատա-քննչական ծառայություններ, կրկնակի մուտքի ծառայությունների բաժին
Օժանդակ ամբուլատոր բուժում (AOT-LA)

AOTLAOE@dmh.lacounty.gov

Հեռ.՝ 213.738.2440

Ֆաքս՝ 213.402.3043

https://dmh.lacounty.gov/our-services/countywide-services/aotla/

Little Tokyo (Սպասարկման տարածք 1-4)
213.922.8144

Lomita (Սպասարկման տարածք 5-8)
310.534.3684

LACDMH արժեքները

Բարեվարքություն. Մենք մեզ դրսևորում ենք արհեստավարժ կերպով՝ էթիկայի բարձրագույն չափանիշներին համապատասխան:

Հարգանք. Մենք ճանաչում ենք յուրաքանչյուր անհատի յուրահատկությունը և բոլոր մարդկանց վերաբերվում ենք այնպես, որ հաստատում է նրանց անձնական արժեքը և արժանապատվությունը:

Հաշվետվողականություն. Մենք պատասխանատվություն ենք կրում մեր նախընտրությունների և դրանց արդյունքների համար:

Համագործակցություն. Մենք աշխատում ենք միասին ընհանուր նպատակի ուղղությամբ՝ համագործակցելով ամբողջ համայնքի հետ, կիսելով մեր գիտելիքը, ստեղծելով ամուր կոնսեսնուս և միասին կայացնելով որոշումներ:

Նվիրում. Մենք կանենք ամեն ինչ՝ բարելավելու մեր հաճախորդների և համայնքների կյանքը:

Թափանցիկություն. Մենք բացահայտ կերպով փոխանցում ենք մեր գաղափարները, որոշումները և արդյունքները՝ մեր կազմակերպության նկատմամբ վստահություն ապահովելու նպատակով:

Որակ և գերազանցություն. Մենք սահմանում ենք ամենաբարձր անձնական, կազմակերպչական, մասնագիտական և կլինիկական չափանիշները և պարտավորվում ենք հասնել այդ չափանիշներին՝ շարունակաբար բարելավելով մեր կատարողականի բոլոր ասպեկտները:

Եթե հայտնվել եք ճգնաժամի մեջ և անհապաղ օգնության կարիք ունեք, անվճար զանգահարեք մեր 24/7 Օգնության գծին՝

800.854.7771

dmh.lacounty.gov

Օժանդակ ամբուլատոր բուժում (AOT-LA)

LOS ANGELES COUNTY
DEPARTMENT OF MENTAL HEALTH
hope. recovery. wellbeing.

Մեր մասին

Օժանդակ ամբուլատոր բուժումը (AOT), որը նաև հայտնի է որպես Laura-ի օրենք, սկիզբ է առել 2001 թվականին ծանր հոգեկան հիվանդությամբ տառապող անհատի կողմից Laura Wilcox-ի սպանությունից հետո:

AOT-LA ծրագիրը սպասարկում է լուրջ հոգեկան հիվանդություն ունեցող անձանց, ովքեր գտնվում են վատթարացման և/կամ կալանավորման զգալի ռիսկի տակ համաձայն WIC5150-ի՝ հոգեբուժական բուժման անբավարարության անմիջական հետևանքով: Ծրագիրն առաջարկվում է այս անհատներին՝ փորձելով նրանց ներգրավել կամավոր բուժման մեջ: Եթե անհատը շարունակում է մերժել բուժումը, ծրագիրը կարող է որոշել դիմել, որպեսզի անհատը ենթարկվի դատարանի կողմից նշանակված բուժման:

Տրամադրվող ծառայություններ

- Ակտիվ տեղեկատվական արշավ և ներգրավվածություն առնվազն 30 օրվա ընթացքում
- Ձննում և գնահատում
- Ուղղորդում ամբուլատոր հոգեբուժական բուժման, հիմնականում Լիարժեք սպասարկման գործընկերության (FSP) մատակարարների մոտ
- Կարող է դիմել դատարանի կողմից նշանակված հոգեբուժական բուժման համար
- Մասնակցություն դատական լսումներին և հետևում դատական վճիռների կատարմանը

Ինչ չենք կարող տրամադրել

AOT-LA-ը տրամադրում է ամբուլատոր ծառայություններ և չունի դեղորայքի կամ հարկադիր երկարատև հոսպիտալացման կամ Lanterman Petris Short (LPS) խնամակալության պարտադրման լիազորություն, հետևաբար, ծրագիրն ի վիճակի չէ նախաձեռնելու երկարաժամկետ, ոչ կամավոր բուժում: LPS-ի խնամակալությունները նախաձեռնվում են հոգեբուժարանների կողմից, հետևաբար, երկարաժամկետ ոչ կամավոր բուժում պարտադրելու կամ չպարտադրելու որոշումը կայացնում է բուժող բժիշկը և հաստատությունը:

AOT-LA-ը չի տրամադրում ճգնաժամային արձագանք հոգեբուժական ճգնաժամի մեջ գտնվող անձանց: Եթե Դուք հոգեբուժական ճգնաժամի մեջ եք, զանգահարեք 911 կամ LACDMH-ի Օգնության գիծ, 24/7՝ 1.800.854.7771 հեռախոսահամարով:

Ո՞վ կարող է ուղեգիր տրամադրել:

Նրանք, ովքեր համապատասխանում են հետևյալ չափանիշներից մեկին, կարող են ուղեգիր տրամադրել AOT-LA ծառայությունների համար.

- 18 կամ ավելի բարձր տարիքի համատեղ բնակվողները
- Ծնողները, քույրը/եղբայրը, կինը/ամուսինը կամ հաճախորդի 18 տարեկանը լրացած երեխան
- Հաճախորդի բնակելի խնամքի հաստատության տնօրենը
- Հիվանդանոցի տնօրենը
- Հոգեկան առողջության բուժում տրամադրող վկայագրված անձը
- Իրավապահ մարմինների պաշտոնյան/Պայմանական վաղաժամկետ ազատման սպան/Պրոբացիայի սպան
- Առաջին ատյանի դատարանի դատավորը

Իրավասության պահանջներ

Որպեսզի որակավորվի AOT-LA ծառայությունների համար, թեկնածուն պետք է համապատասխանի ստորև ներկայացված <u>բոլոր</u> չափանիշներին.

- 18 տարեկան կամ բարձր
- Լուրջ հոգեկան հիվանդ
- Հաշվի առնելով բուժման պատմությունը և ներկայիս վարքագիծը, հետևյալներից առնվազն մեկը ճիշտ է.
  - Առանց հսկողության համայնքում անվտանգ գոյատևելու հավանականություն <u>և</u> վիճակի զգալիորեն վատթարացում կամ
  - AOT-ի կարիք ունի՝ կանխելու ռեցիդիվը կամ վատթարացումը, որը կարող է հանգեցնել ծանր հաշմանդամության կամ լուրջ վնասի ինքն իր կամ ուրիշների հանդեպ
- Ունի բուժման պահանջները չկատարելու պատմություն, որի ժամանակ հաճախորդի հոգեկան հիվանդությունը հանգեցրել է հետևյալներից առնվազն մեկի ճշմարիտ լինելուն.
  - Վերջին 36 ամսվա ընթացքում երկու կամ ավելի հոսպիտալացում և/կամ դատաբժշկական հոգեկան առողջության բուժում ազատազրկման ժամանակ
  - Վերջին 48 ամսվա ընթացքում մեկ կամ մի քանի լուրջ և բռնի վարքագծի կամ սպառնալիքի կամ ինքն իրեն և/կամ ուրիշներին լուրջ ֆիզիկական վնաս պատճառելու փորձեր
- Մատչելի բուժում ստանալու ձախողում
- AOT-ը կլինի ամենաքիչ սահմանափակող տեղակայումը, որն անհրաժեշտ է վերականգնումն ու կայունությունն ապահովելու համար
- Հավանականություն, որ օգուտ կքաղի AOT-ի ծառայություններից

Վերջին թարմացումը՝ 02/20/2025